ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 223-Ա/3 «08» Հոկտեմբերի 2024թ.

«ԴՈՆԱ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ- ԻՆ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/89» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նոյեմբերի 6-ի որոշումը առ այն, որ **«Դոնա կահույք»** ՍՊԸ-ի կողմից 1-4-րդ չափաբաժինների համար ներկայացված հայտում եղել են անհամապատասխանություններ (հավելված 1 դիմում-հայտարարությամբ ներկայացված մասնակցության չափաբաժինները չեն համապատասխանել ապրանքների տեխնիկական բնութագրերում և գնային առաջարկում ներկայացված չափաբաժիններին, տեխնիկական բնութագրերում հղում է արված եղել նկարներին, որոնք չէին կազմելու պայմանագրի մաս, ինչպես նաև դիմում-հայտարարությունը հաստատված է եղել էլեկտրոնային ստորագրությամբ, սակայն բացակայել է կազմակերպության տնօրենի անուն ազգանունը և հասկանալի չի եղել թե ով է փաստաթուղթը ստորագրած անձը), որոնք շտկման համար տրված ժամանակահատվածի ավարտից հետո մասնակցի կողմից չեն շտկվել և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2–րդ մասով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

«Դոնա կահույք» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00110618, գործունեության հասցեն՝ ք Երևան Ավետ Ավետիսյան 118) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

11/8/2024

X

ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Signed by: HAKOBYAN HASMIK 5610800161 **Հ. ՀԱԿՈԲՅԱՆ**